ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի 2014 թվականի **թիվ 71** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման 2.1-րդ կետում փոփոխություն կատարելու մասին

«Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013), «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) եւ «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու հետ կապված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. «Մաքսային միությունում սանիտարական միջոցառումների կիրառման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշման 2.1-րդ կետը յոթերորդ պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ պարբերություններով.

«- մինչեւ 2014 թվականի մայիսի 1-ը՝ ըստ 1-ին բաժնի: «Սննդամթերքի անվտանգությանը եւ սննդային արժեքին ներկայացվող պահանջները» Մաքսային միության «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին»

(ՄՄ ՏԿ 033/2013) եւ «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կանոնակարգման առարկա հանդիսացող արտադրանքին ներկայացվող պահանջների մասով՝ նշված կանոնակարգերն ուժի մեջ մտնելու հետ կապված.

- մինչեւ 2014 թվականի հուլիսի 1-ը՝ ըստ 6-րդ բաժնի: «Պոլիմերային եւ պոլիմեր պարունակող շինարարական նյութերին եւ կահույքին ներկայացվող պահանջները» Մաքսային միության ««Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012) տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման առարկա հանդիսացող արտադրանքին ներկայացվող պահանջների մասով՝ նշված տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու հետ կապված:»:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ **Վ. Խրիստենկո**